ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 դեկտեմբերի 2023թ. թիվ 784-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ
ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասով, համաձայն ՀՀ Լոռու մարզպետարանի և ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) Լոռու մարզային վարչության հետ համատեղ կազմված աշխատանքային ծրագրի, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 04.12.2023թ. թիվ ԳՍ/15.2/37049-2023 հանձնարարականը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2024թ. հունվարի 1-18-ը անցկացնել անասնագլխաքանակի համատարած հաշվառում:

2. Հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետում և պատշաճ մակարդակով իրականացնելու համար առաջարկել Լոռու մարզի բոլոր համայնքների ղեկավարներին՝

1) Մինչև ս/թ դեկտեմբերի 29-ը կազմել անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողովներ՝ դրանց կազմում ընդգրկելով նաև տվյալ համայնքը սպասարկող անասնաբույժին:

2) Անասնագլխաքանակի հաշվառման արդյունքները մինչև 2024թ. հունվարի 20-ը ներկայացնել Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն և ՀՀ վիճակագրական կոմիտեի Լոռու մարզային վարչություն:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

04/12/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 4
ք.Վանաձոր